

Հայաստանի Հանրապետության  
Կենտրոնական բանկի նախագահ  
պրն. Ա. Ջավադյանին

Հարգելի պարոն Ջավադյան

Ձեզ եմ ներկայացնում «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) բաժնետեր Արա Արամայիսի Հասրաթյանին 24.06.2008թ-ի անտոկոս նպատակային փոխառության պայմանագրով Ընկերության կողմից տրամադրված գումարի չվերադարձված մասի՝ 234930576 դրամի և դրա վրա կետանցման օրվանից մինչև պարտավորության դադարման օրը հաշվարկված տոկոսների բռնագանձման մասին 18.03.2010թ-ին օրինական ուժի մեջ մտնելու դատարանի վճռի ընթացքի դադարեցման և դրա հետ կապված այլ մանրամասներ, որը նաև տեղադրված է նաև մեր պաշտոնական կայքում (մանրամասները կցվում են՝ առդիր 1թերթ):

Գործադիր տնօրեն

Պապ Բադալյան

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008թ-ի դեկտեմբերի 30-ի թիվ 373-Ն որոշման 50-րդ մասի 10-րդ կետի պահանջի, բացահայտում են «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝

«Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ն (այսուհետև՝ Ընկերություն) և վերջինիս 2 խոշոր բաժնետերերը բանավոր համաձայնության են եկել կնքել պայմանագիր, առ այն, որ Ընկերության բաժնետեր Արա Արամայիսի Հասրաթյանը վաճառում է իր 41971 հատ բաժնետոմսերը Ընկերության մյուս խոշոր բաժնետեր Սամվել Հերբերտի Բեգլարյանին, իսկ վերջինս վաճառողի փոխարեն վճարում է վճռով նախատեսված դատական ծախսը, ստանձնում է վաճառողի 234930576 դրամի փոխառությունը և դրա նկատմամբ 24.06.09թ-ից սկսած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները, ինչպես նաև վաճառողին է վճարում 10.0 մլն դրամ, իսկ Ընկերությունը պարտավորվում է հանել Դատարանի որոշմամբ դրված վաճառողի գույքի նկատմամբ արգելանքները:

Ներկայումս Ընկերությունը ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով է ներկայացնում համակենտրոնացման հայտարարագրերը, որից հետո կկնքվի շահագրգիռ կողմերի միջև վերոնշյալ բաժնետոմսերի առուվաճառքի մասին պայմանագիր:

19.03.2010թ-ին Ընկերությունը գումարում է բաժնետերերի արտահերթ նիստ, որի ընթացքում քննարկվելու են բաժնետոմսերի վաճառքի, Արա Արամայիսի Հասրաթյանին համաձայն իր դիմումի տնօրենների խորհրդի անդամից հանելու, Ընկերության մեկ այլ բաժնետեր Արման Բաբաջանյանի 77 հատ բաժնետոմսերի վաճառքի հարցերը, ինչպես նաև Ընկերության 100% մասնակցությամբ նոր ընկերություն հիմնադրելու մասին, որով պետք է իրականացվեն գիպսի հանքի շահագործման աշխատանքները: